

ՀՈՒՈՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՑՈՒՑԱՀԱՆՐԻԵՍ

Պատրիարք Արքայան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարայետ Տ. Նուրիան Մ. Վրդ. Մանուկեանի մասնակցեցաւ Վատիկանի Քանգարանի Սեփտինեան սրահին մէջ կազմակերպուած «Հոռմ-Հայաստան» ցուցահանդէսին, Մարտ 24ին:

Հոռմի Յովհաննէս-Պօղոս Բ. Արքայան Պապին հետ Ամենայն Հայոց Գարեգին Ա. Վեհափառ Կաթողիկոսը եւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոպերթ Քօչարեան իրենց գնահատական խօսքերով կատարեցին բացումը, Վատիկանի Առաքելական Գրադարանի գահաւարահին մէջ հաւաքուած հրաւիրեալներու ներկայութեան:

Մարտ 25ին, Ամենայն Հայոց Վեհափառ հայրապետը, իրեն ընկերացող

հոգեւորականներու շխախտմով, տեսակցութիւն մը ունեցաւ Արքայան Պապին հետ, յայտնելով Հայց. Եկեղեցւոյ եւ Հայրենի Պետութեան շնորհակալութիւնը, պատմական նշանակութիւն ունեցող «Հոռմ-Հայաստան» ցուցահանդէսին ստեղծած խանդավառ եւ դաստիարակչական հետաքրքրութեան համար: Կատարուեցաւ նաեւ յուշանուէրներու փոխանակում:

Մարտ 26ին, Վեհափառ Հայրապետը, որ Նիւ Եօրթէն Լոնտոն ժամանելով, Մարտ 23ին բարեբար Տիար Վաչէ. Մանուկեանի անձնական ինքնաթիռով Արքայան Պապին այցելեց ցուցահանդէսի բացման առիթով, կրկին Լոնտոնի համրով վերադարձաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: «Հոռմ-Հայաստան» ցուցահանդէսը մինչեւ Յուլիս 16 բաց պիտի մնայ քաղաքի ներքին վայելուքին:

Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆՐԻԵՄՆԵՐ

29 Մայիս 1999, Շաբաթ յետ միջօրեին տեղի ունեցաւ Արքոց Թարգմանչաց Վարժարանի Մանկապարտէզի շրջանաւարտ Մաղիկ դասարանի ամսվերջի հանդէսը, մախազահութեամբ Արքայան Պատրիարք Հօր: Ուրբ մանուկներ շրջանաւարտութեան վկայական ստացան, յստակ առողջութեամբ եւ եռանդուն արտայայտութիւններով երգելով, պարելով, արտասանելով:

Իսկ 5 Յունիսին, Արքոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի շրջանաւարտից դասարանը, մախազարանի աշակերտութեան մասնակցութեամբ, մշակութային կոկիկ յայտագիր մը հրամցուցին Պատրիարք Արքայան Հօր, Միաբանութեան անդամներուն, ծնողներուն եւ ներկայ հասարակութեան: Ուրբ շրջանաւարտները հինգ լեզուներով իրենց սէրը եւ երախտագիտութիւնը յայտնեցին հանդէպ իրենց վարժարանի տեսչութեան, ուսուցիչներուն, ծնողներուն, իրենց ջամբուած տասնըհինգ տարիներուն ուսուցիչն համար:

Ստացան իրենց վկայականները եւ ուսմանց մէջ իրենց յառադիմութեան մրցանակները, նոյնպէս Գալիֆորնիոյ մէջ կազմուած Արքոց Թարգմանչաց Վարժարանի Սանուց Միութեան հաստատած մրցանակները, յանուն Պր. Սեդրակ Պաղտոյանի՝ Հայերէն Լեզուի եւ Հայոց Պատմութեան, նաեւ յանուն Օր. Տիգրանուհի Նալպանտեանի՝ Անգլերէն Լեզուի եւ Ընդհանուր Գիտութեան ճիւղերուն մէջ յաջողագոյն աշակերտներուն յատկացուած: Իսկ Տիկին Արսինէ Քասախեանի անունով հաստատուած մրցանակը տրուեցաւ Նախակրթարանի մէջ Բարձրագոյն Միջին ապահոված աշակերտին:

Հանդէսին յաջորդող երկու շաբաթուան ընթացքին, Հայ Երիտասարդաց Միութիւնը (10 Յունիսին) եւ հայ Օգնութեան Միութիւնը (19 Յունիսին) իրենց ակումբներուն մէջ պատուասիրեցին Արքոց Թարգմանչաց Վարժարանէն եւ որեւէ վարժարանէ շրջանաւարտ երուսաղէմացի Հայ ուսանողները: